## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ ՍԱՆՇՆԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ[1]

1. Պոլիկարպոս, 966—970 (Քոթ., էջ 39):
2. Գրիգոր, 970—972 (Քոթ., էջ 40):
3. Հովհաննես Գիտնական, 972 (Քոթ., էջ 40 և Ասողիկի Պատմություն, էջ 181):
4. Եսայի եպիսկոպոս, 979 (Քոթ., էջ 47), 1011 (արձ. 171):
5. Դիոսկորոս հայրապետ, մինչև 1037 (Կիրակոս Գանձակեցու պատմություն, էջ 24, Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրություն, էջ 76–78, երկու տարի ընդմիջումից հետո՝ 1039—1063 (արձ. 105, 179):
6. Հովհաննես, 1178 (արձ. 181), 1181 (արձ. 12, Քոթ., էջ 70):
7. Գրիգոր որդի Տուտա Խաչենցի, 1183 (արձ. 184), 1184 (արձ. 169), 1197 (արձ. 20):
8. Հովհաննես Խաչենցի, 1184 (արձ. 169, աթոռակից է նախորդին), 1191 (արձ. 13), 1195 (արձ. 20), 1205 (արձ. 175, Կիրակոս Գանձակեցու պատմություն, էջ 162):
9. Վարդան վարդապետ, 1211 (արձ. 51, 59):
10. Գրիգոր վարդապետ, որդի Արասա, 1211, աթոռակից է նախորդին, (արձ. 51, 59):
11. Փիլիպպոս, 1214 (արձ. 45), 1215 (արձ. 44):
12. Գրիգոր վարդապետ որդի Արասա, 1214—1215, աթոռակից է նախորդին (արձ. 45 և 44), 1217 առաջնորդ է (արձ. 33, 46, 49):
13. Վարդան, աթոռակից նախորդի, 1215 (արձ. 155):
14. Հովհաննես քեռորդի Զաքարե և Իվանե եղբայրների, 1221 (արձ. 56), 1222 (արձ. 15, 174), 1225 (արձ. 139):
15. Գրիգոր վարդապետ որդի Արասա, 1229 (արձ. 52. 58), 1234 (արձ. 127), թաղվել է Սանահնում (արձ. 158):
16. Ավետիս, 1240 (արձ. 53):
17. Հովհաննես, 1241 (արձ. 182):
18. Ավետիս վարդապետ, 1251 (արձ. 114), 1252 (արձ. 176), 1255 (արձ. 132), 1256 (արձ. 120):
19. Կիրակոս, 1257 (արձ. 115), 1258 (արձ. 16, 117), 1262 (արձ. 121), 1263 (արձ. 118), 1264 (արձ. 113), 1267 (արձ. 126):
20. Մխիթար, 1267 (արձ. 95):
21. Կիրակոս, 1275 (արձ. 128):
22. Հովհաննես, 1280 (արձ. 124), 1289 (արձ. 123), 1291 (արձ. 133):
23. Ստեփաննոս, 1291 (արձ. 116, 64):
24. Հովհաննես, աթոռակից է նախորդին, 1291 (արձ. 116, 64):
25. Ղազար, 1421 (ձեռագիր Վիեննայի Մխիթարյանների 419, Տաշյանի ցուցակ, էջ 873)[2], 1424 (Երևանի Մատենադարանի ձեռագիր, 4435)[3]:
26. Հովհաննես, 1437 (ձեռագիր Երևանի Մատենադարանի, 8979, էջ 349բ):
27. Բարսեղ արքեպիսկոպոս Արղությանց, 1475 (ձեռագիր Երևանի Մատենադարանի, 6383, էջ 320ա), 1496 (ձեռագիր Երևանի Մատենադարանի, 3333, էջ 308բ), անթվական (արձ. 62, 135):
28. Ղուկաս եպիսկոպոս, 1514 (արձ. 186), 1515 (Քոթ., էջ 73), 1520 (արձ. 101), 1534 (ձեռագիր Երևանի Մատենադարանի, 217, էջ 326ա):
29. Ղուկաս Արղութեցի, տապանաքարը, 1634 (արձ. 157):
30. Մարգիս արքեպ. Արղութեանց, որդի Բերեքի, 1646 (ձեռագիր Երևանի Մատենադարանի, 6663, էջ 265բ), 1652 (արձ. 14), 1656 (արձ. 108), վախճանվել է 1681 (արձ. 36):
31. Հովհաննես, 1681 (արձ. 26):
32. Մարգիս եպիսկոպոս, 1713 (Մանր ժամանակագրություններ, XIV—XVIII դդ., հատոր II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 523):
33. Բարսեղ արքեպիսկոպոս Արղությանց, թոռն Բերեքի, վախճանվել է 1718 (արձ. 159):
34. Մկրտիչ Ասկերոզլի, 1719 (Ջալ., էջ 40):
35. Գրիգոր, որ Քարուլ է գնացել, 1735 (Ջալ., էջ 40):
36. Աբրահամ, 1784 (Ջալ., էջ 40):
37. Առաքել, 1797 (Ջալ., էջ 40):
38. Հարություն եպ. Տեր-Բարսեղյանց, 1831 (արձ. 162), 1833 (Ջալ., էջ 40):

---

[1] Փակագծի մեջ ցույց ենք տվել աղբյուրը, որտեղից քաղել ենք տեղեկությունը, իսկ փակագծից դուրս՝ այն տարեթվերը, որոնց մասին ստույգ տեղեկություններ ունենք:

[2] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 257:

[3] Անդ, էջ 316: